**Եվրոպական դատարանի վճիռների կատարման տեսությունը սեմինար**

28.06.2011 07:53

**2-3 հուլիսի 2011թ.**

**Դասընթաց**

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչությունը իր գործընկեր կազմակերպությունների՝ ՀՀ փաստաբանների պալատի և ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի աջակցությամբ 2011 թվականի հուլիսի 2-ից 3-ը կազմակերպում է դասընթաց Ծաղկաձորում հետևյալ թեմաներով՝

- Եվրոպական դատարանի վճիռների կատարման տեսությունը, վճիռների կատարումը ՀՀ-ի կողմից, հիմնախնդիրները.

- «Ողջամիտ կասկած» հասկացությունը և խափանման միջոց կալանքի հիմքերը ըստ ՄԻԵԴ և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի:

• Վճռաբեկ դատարանի որոշումը Վահրամ Գևորգյանի գործով

- «Մեղադրանք» հասկացությունը և ձերբակալման հիմնախնդիրները. Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը:

• Վճռաբեկ դատարանի որոշումը Գագիկ Միքայելյանի գործով
• Վճռաբեկ դատարանի որոշումը Նորիկ Պողոսյանի գործով

- «Խոշտանգում» հասկացությունը, պետության պոզիտիվ պարտականությունների շրջանակները, մասնավորապես, ապացույցի ընդունելիության և արդյունավետ քննություն կատարելու իմաստով.

• Վճռաբեկ դատարանի որոշումը Արայիկ Գզոյանի գործով

- «Սուբսիդիար մեղադրող» հասկացությունը քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում:

• Վճռաբեկ դատարանի որոշումը Տիգրան Քամալյանի գործով
• Վճռաբեկ դատարանի որոշումը Արսեն Միրզոյանի գործով

- ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը վկային հարցաքննելու առումով. «վկա» հասկացությունը

• ՄԻԵԴ որոշումը Մամիկոնյանի գործով

Նախնական ցուցակագրման համար կարող եք զանգահարել Ամերիկյան իրավաբանների ընկերակցության գրասենյակ հետևյալ հեռախոսահամարներով՝ 554 991, 556 449:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&

```
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```